

ՉՈՐԵՔԵԼԻՔԻ ԳՐԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Պուշկարինյ	համար
Տարեկան	12 Ձր
Վեցամսեայ	6 »
Արսասահմանի	
համար տարեկան	15 »
Վեցամսեայ	8 »

Ասերիկայի	համար
Տարեկան	3 զր.
Վեցամսեայ	1.50 »

Մանուցման տղր անու  
զին երեսին համար 40 ս.  
իսկ վերջին երեսին հա-  
մար 20 սակրիւ է. երե  
կէն անցի անգամներու  
համար 20 Օյժ գեղէ կր:

Վառնայի համար 40 սակրիւ

# ՇԱՐՄՈՒՆ

ՈՐԱԳԻՐ ԱԶԳԱՆՆԵՔ ԲԱՆԴԱՍՏԱՆԻ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ ՏՐԱՎՈՒԹՅՈՒՆ ՉՈՐԵՔԵԼԻՔԻ ԵՒ ՇԱՐՄՈՒՆ ՕՐԵՐԸ

Նայակ. եւ որում որ կի  
մերկոթերն են հա-  
ցիւծ

Редакция на вѣстникъ  
„Шаржумъ“  
Варна

Redaction du journal  
„Charjourn“  
Varna (Bulgarie)

Արսասահմանի համար  
մեկէ  
( 20 ՍԱԿՐԻՒՄ )  
Պուշկարինյ համար  
մեկէ  
( 15 ՍԱԿՐԻՒՄ )

Գրութիւնք ևս չեն տրուիր

## ՀԱՅՎԱԿԱՆ ՇԱՐՄՈՒՆՆԵՐ

Ն. Փ. Բրէտէ թերթը կը հա-  
ղորդէ թէ՛ նշգլխան թէ՛ եւ նուա-  
յին ցոյց ընելու սպասուած չէ  
թուրքոյ գէ՛մ, բայց սմեռնէն  
խիստ դիմուել ըրած է և կոպտե  
իր քննիչ հրապարտող տեղեկու-  
թիւններու: Իսկ թէ զալիք տե  
ղեկութիւնները ցոյց տան թէ  
քիւրտերը և իւրօրը մեծ վստ-  
ներ հասուցած են չայերուն,  
այն ատեն ինքն ալ համապա-  
տասխան քայլեր պիտի առնէ:

— Յունիսի Պուլսէն վիճենա կը  
հաղորդեն թէ՛ Անգլիոյ, Պրան-  
այի և Ռուսոյ պահանջմամբ  
Բ. Վուրը ազատ արձակած է ձեր  
բակաւում հայերը և թոյլատ-  
րած որ փախտական հայերը վե-  
րադառնան Սասուն: Դուրը զը-  
րամական օգնութիւն պիտի ապ-  
հայերուն և մշակելու հոյ:

Հաւանական է որ Սուլթանը  
իր հաւանութիւնը տայ Բ. Դրան-  
այի որոջմանը:

— Յունիս 11ին Պուլսէն վիճենա  
կը հեռագրեն թէ Պիթիիզէն տե-  
ղեկութիւն և կամ է որ Սուլթանը  
արդէն սկսած են քննել ձերբա-  
կալում հայերու գործերը:

— Նոյն թուականին, նոյնպէս  
Պուլսէն վիճենա կը հեռագրեն  
թէ Պիթիիզէն վայրին կը հաղոր-  
դեն որ Սուլթանը մտերմութեամբ զօր-  
քերուն և հայ հրոսամարտի մը մի-  
ջե կռիւ տեղի ունեցեր է, որու  
փոխարէն սպանուած են 11 հոգի:

Արդ հրոսամարտի մը բազմա-  
ցած 11 հոգիէ ձերբակալուած է  
Սուլթանը:

— Ձերբակալուած է նաեւ անձ  
մը, իր երկու ծառաներով միա-  
սին:

(Այդ անձին անունը հասկնալի  
կերպով չէ հաղորդուած հեռագ-  
րին մէջ):

— Յունիս 11 Պուլսէն կը հեռա-  
գրեն որ թիւրք զօրքերը, Պիթի-  
իզի քովը, Ձէթուր գիւղին մէջ  
ձեռք անցուցեր են ապստամբա-  
կան գործակ մը, յեղափոխական

բովանդակութեամբ թղթեր և  
զանազան պէնքեր ու պատերազ-  
մական միջոցներ:

### ՀՍՎԱՅԱԿԱՆ ՄԻԹԻՆԳԸ ՀՈՒՄՐԻ ՄԷ՞՞ Ի ՆՊԱՍՏ ՀԱՅՍՍԱՆԻ ԵՒ ՄՍԿԵՒ ՆԻՈՅ

Այս վերնագրով պուլսէն վիճենա  
Բոլթա թերթը, Հոսմէն յունիս 6  
թուական թղթակցութիւն մը ունի  
իր անցեալ շաբաթ օրուան թիւին  
մէջ, որուն, ըստ մեզ, հետաքրք-  
րական մասերը աւելորդ չենք համա-  
րիր հաղորդել և մեր ընթերցողնե-  
րուն:

«Միթիւնը այսօր տեղի ունեցաւ  
Ադրբանո ընդարձակ թատրոնին մէջ,  
Վառնայի թատրոնի մէջ: Հայ-  
կական ընկերութեան և մասնակ-  
ցութեան հազարներէ բաղկա-  
ցած ժողովրդի:

Այդ միթիւնը բողոք մըն էր և  
բողոքաւ կատարուած էր և ամ-  
բողջ քաղաքակրթական երուպայի և  
անոր դիւանագիտութեան ղէմ, որը  
կը համարէ հայերու և մակեդոնա-  
ցիներու արեան մէջ թախտած  
ձեռքերը Սուլթանին, Միթիւնը  
կը մասնակցէին ձերբակալուած  
ներ, երեսփոխաններ, զբաղէտներ,  
ուսուցչականներ և հրապարակա-  
գիրներ, Բոլթա տոնախօսներն ալ  
զգուանքով, բոլորեալ խօսեցան  
թրքական երկու թշուառ նահապ-  
ներուն մէջ ստեղծուած կացութեան  
ղէմ: Ամբողջ Իտալիայէն բարեսի-  
րական և հայրենասիրական ընկե-  
րութիւններն պատուիրակներ կ'առ-  
նէին մասնակցելու այդ միթիւնին,  
ուր արտաստեղծեցան բազմաթիւ ճա-  
ներ մտադասարանի ղեկ մեղադրա-  
կանը կազմելով: Վախճան թէ թղ-  
թակցութիւն այդ միթիւնին մէջ  
խօսուածներու արժէքը շատ կորսն-  
ցուց: Աստիճապէս կը ճանչին  
սրտանց և անոնց խօսքերը չէին  
լսուեր, այլ կ'զգացուէին: Այդ հա-  
տարմին մէջ չէր պարզաբանուեր,  
այլ կ'ապրէր, կ'ապրէր երկու ժո-  
ղովուրդներու կեանքով, որոնք դա-  
տապարտուած են արիւն մատակա-  
րարի քաղաքակրթութեամբ իւր-  
րախճանքներուն: Դատապարտուած  
են իրենց տանջանքներով ամենա-  
մեծ մարդասէրներուն երազանքնե-  
րը մղձաւանջի վերածելու Իսկ անոնք  
որ կը խօսէին և կը լսէին մարդա-  
սիրութեան ներկայացուցիչները,  
իտալական ղեկավարներ ներկայա-

ցուցիչներն էին:  
Չոր ու ցամաք, ձեր բոլորովին  
աղիզարդ մաշուած և երկար երե-  
սով, ու ձիւնի պէս ձերմակ հարուստ  
մօրուքով, երկու սեւ ազամանդնե-  
ներու նման փայլող աչքերով, ո-  
րոնք ամենքուն խաղաղութիւն և  
երջանկութիւն կը խոստանան—Ու-  
սուցչական ծրուագէ Դ. Սէրթին—  
«Պի Մակեդոնիոյ և պիտի Միթիւնը  
կերպութեան նախագահը, հրաբորք  
ճառով մը միթիւնը բացաւ, որով  
և իսկոյն բոլոր ունկնդիրները հա-  
ւաքովին ընդմիջ և ոգին ըմբռնե-  
լու կացութեան մէջ դրուեցան:

«Նոյն այս արեւին տակ, որ այն-  
չափ պայծառ կը փայլէր Հոսմէն մէջ,  
և ոչ այնքան շատ մեղմէ հեռու,  
կան երկու նահանգներ որոնց մէջ  
անպարտական կիներու, անգոր մա-  
նուկներու և ձերբերու, բռնաբար-  
ուած կոյսերու արիւնը կը թափուի  
մի թաղապարակ սիրապետողի հը-  
րամանովը: ու մեր քաղաքակր-  
թութեան և անցեալի համապատաս-  
խան, ազատ Հոսմի և անոր քա-  
ղաքացիներուն վայել բողոք մը  
բարձրացնելու համար քաղաքացիներ,  
այսօր հոս հաւաքուած ենք: Հա-  
յաստանը և Մակեդոնիան կը ջնջուին  
բարբարոս կատարուած թեան մը ձեռ-  
քովը, որ իր կեանքը ուրիշներու  
մահուան մէջ կը զտնայ, որ կը կե-  
րակրուի այդ նահանգներուն մէջ  
ապրողներուն մէջ պատառ պատառ  
եղած միտերովը: Գաղափարներ  
Եւրոպան չի շարժուիր, ան խաղաղ  
ու հանգիստ կերպով հանդիսատես է  
այդ սպանդանոցին, Բոլթա դուք հո-  
մայցիները, դուք չընէք Եւրոպայի  
գիւտնագիրտութեան ցրտութիւնը և  
հաշիւները, դուք զգացմունքներ ու-  
նիք և մարդասէր էք: Ուրեմն ան-  
գամ մըն ալ մեր ձայնը բարձրաց-  
նենք և ցոյց տանք թէ մեր մարդ  
կային, սղբայրական զգացմունքնե-  
րը, սէրը և սրտացաւութիւնը ղե-  
պի հարստահարուած ժողովուրդները  
զեռ մարած չեն: Թող ուրեմն մեր  
ձայնները միացնենք արդէն նոյնը  
պատակով Լոնտոնի և Բարթի մէջ  
բարձրացած ձայներուն, որ Հայաս-  
տանի և Մակեդոնիոյ գոհերու ար-  
իւնտ ցաւէն դուրս պոթկած են:

Նախ քան որոշուած ատենախօս-  
ներուն խօսիլը, կարդացուեցան մեծ  
քանակութեամբ շնորհաւորական հե-  
ռագիրներ և նամակներ Իտալիոյ բո-  
լոր կողմերէն և շատ մը քաղաքա-  
կան նշանաւոր անձերէ:

Միթիւնը ևս չեն տրուիր  
Պիթիւնը ևս չեն տրուիր  
Պիթիւնը ևս չեն տրուիր  
Պիթիւնը ևս չեն տրուիր

Սասնայի քաղաքացիները կը  
ընդհատէ ատենախօսը: կը հրաւիրէ  
որ Իտալիոյ բարեկամ պետութեան  
մը վեհապետի մասին այդ ձեռք չը  
խօսի:

Պէտք է որ ըլլայիք այդ ընդարձակ  
սրահին մէջ որպէսզի կարենայիք  
պատկերացնել զգուանքի, սուրցնե-  
րու, գոչումներու փոթորիկը որ  
բարձրացաւ ոստիկանութեան այդ  
անտեղի միջամտութեան հետեւ...  
Քոտեմ գոչումը բարձրացաւ ամէն  
կողմէն: Վայրկեան մը արարք սպա-  
նական հրաբուխի կերպարանքը ըն-  
դհուցնեց: Դանի մը հազար ձայներ  
զոտացին: — Աբասո իլ Սիւլտանո

Աստիճապէս կը ճանչին  
սրտանց և անոնց խօսքերը չէին  
լսուեր, այլ կ'զգացուէին: Այդ հա-  
տարմին մէջ չէր պարզաբանուեր,  
այլ կ'ապրէր, կ'ապրէր երկու ժո-  
ղովուրդներու կեանքով, որոնք դա-  
տապարտուած են արիւն մատակա-  
րարի քաղաքակրթութեամբ իւր-  
րախճանքներուն: Դատապարտուած  
են իրենց տանջանքներով ամենա-  
մեծ մարդասէրներուն երազանքնե-  
րը մղձաւանջի վերածելու Իսկ անոնք  
որ կը խօսէին և կը լսէին մարդա-  
սիրութեան ներկայացուցիչները,  
իտալական ղեկավարներ ներկայա-

կարնէքիս Եւ ոստիկանապետը գոհ  
ստացած յաջողութենէն, ու հանգս-  
տացած թէ իր պարտականութիւնը  
կատարեց, եւ քաջաբեցաւ շարունա-  
կութիւնը մտիկ ընելու :

Ատենախօսը շարունակեց աւելի  
խիստ յարձակումներով, նա մաս-  
նանշեց Հիյաստանի եւ Մակեդոնիոյ  
կացութեան վտանգաւոր ըլլալը, ուր  
կապառուին նոր կոտորածներ, նոր  
աւերումներ, նոր խռովութիւններ :  
Այ կը նախագուշակուի, որովհետեւ  
Քրքական վարչութիւնը չէ փոխուած :  
Ան փոխուած չէ նաեւ Մակեդոնիոյ  
մէջ, ուր կը ներմուծուին տխրահո-  
շակ բարենորոգումները :

Եթեւրքիան կարող չէ բարենորոգ-  
ուելու, քանի որ Սուլթանը միակ  
պետը կը մնայ, որ և ամեն ճիգ կը  
թափէ արգիլելու եւրոպական առողջ  
հակոգութեան մը հաստատումը խօս-  
քերով վերջացուց երեսփոխան Մածա.  
Վերջը խօսեր է երեսփոխան տէր  
Բալզան, որուն ճառը ամբողջապէս  
զրեթէ Արաբիոյնիոյ կը վերաբերի :  
Վերջապէս միթիւնգին յանձնարումը  
հետեւեալ որոշումը կառաջարկէ քը-  
ուէարկելու :

Հետոյ քաղաքացիները, այս հա-  
զարներէ բազմապէս գումարումը կազ-  
մելով և աչքի առջև առնելով որ Հա-  
յաստանի ու Մակեդոնիոյ կացութիւ-  
նը երբէք բարեւոքուած չէ. ընդհա-  
կառակը նոր ապստամբութիւններ և  
նոր կոտորածներ կապառան խաղա-

զութեան, կը բողոքեն թուրք զին-  
ուորներու խստութիւններու և տը-  
մարդի կոտորածներուն դէմ և կը  
խնդրեն եւրոպական պետութիւննե-  
րէն որ միջամտեն միջազգային դաշ-  
նագրութիւնները իրագործել տալու,  
մանաւանդ Պերլինիը, ինչպէս և քա-  
նի անգամներ խոստացուած բարենո-  
րոգումները հիմնելով միջազգային  
քօնթրօլ մը, առանց որի ամէն մէկ  
բարեւոքում խաբէութիւն և ցնորք է :

Երբ այս որոշումը կարդացուեցաւ  
և հաւաքուածներուն հաւանութիւնը  
խնդրուեցաւ, ոչ ոք հաւանութեան  
ձայն չը հանեց : Յանձնարումը մե-  
տելային լուսութեան մէջ ինկաւ . քա-  
նի մը հազար հոգիէ բաղկացած ժո-  
ղովուրդը հաւանութիւն չը տուաւ  
այդ որոշումին :

Առաջին լուսութենէ յետոյ ամեն  
կողմէ խօսք խնդրեցին, Բարթոլէն,  
օթեակներէն, որոնք միոյն մէջ նստած  
էր Ռիչիւսի Կարէպալտին . զալըլիէն  
խօսք կուղէին . հանդիսականներէն  
մին, որուն պատճառմբ խօսք տրուե-  
ցաւ, առաջինը յայտարարեց, որ այդ  
տեսակ որոշումը չի համապատասխա-  
ներ հաւաքուածներուն ցանկութեանց  
և մտածումներուն. ատենախօսները,  
որոնք ճառերը այնքան եռանդով ծա-  
փահարուեցան, զօրաւորապէս յարձա-  
կեցան եւրոպական դիւանագիտու-  
թեան վրայ, որուն իրաւացիօրէն և  
դարձուցին մեղաւոր թրքական խս-  
տութիւններուն :

Բազաքակրթեալ կառավարութիւն-  
ները լուսութեամբ կը քաջալերեն Մա-  
կեդոնիոյ ապստամբութեանց արիւ-  
նոտ ձնումը, Թուրքիոյ ամենակատա-  
ղի փաշաններէն շատերը իրենց կուրծ-  
քերը կը զարգարեն եւրոպական բար-  
ձրագոյն շքանշաններով : Այսպէս կա-  
ռավարութեանց խնդրել . կը նշանակէ  
կարծել որ անոնք պատրաստ են կա-  
տարել ոչ թէ իրենց պարտականու-  
թիւնը, այլ բարեբարութիւն մը ընել :  
Մենք չենք ուզեր բարեբարութիւն  
այն դիւանագիտութիւնէն, որ մին  
չեւ օրս իրեն ոչ մէկ պարտականու-  
թիւնը կատարած է, չէ յարգած ի-  
րեն ստորագրած ոչ մէկ զանազորու-  
թիւնը : Պէտք է որ մենք բողոքենք  
և մեր ցաւը յայտնենք հանդէպ ա-  
նոնց . ի հարկէ այս տեսակ որոշում  
մը պիտ. քուէարկուի : հաւաքուած  
հասարակութեան կողմէն :

Եւ հասարակութիւնը որոտարի ծա-  
փահարութիւններով քաջալիրեց  
պատահական ատենախօսին խօսքերը .  
քուէարկեց և յանձնարումը համա-  
ձայնեցաւ որոշման մէջ այդ փոփո-  
խութիւնը մտցնել : Ամենէն վերջը  
ամենքն ալ համակրական ջերմ ցոյց  
մը ըրին Ռիչիւսի Կարէպալտին :



ՃԱՐՈՆԱԿԱՆ ԼՐՏԵՍՆԵՐԻ ՄԱՀԸ  
ՊԱՏՈՒՄԻՆ ԿԱՆԱԿԱՆ  
ՎԿԱՍԻ ԿՈՒՄԻՏԵ

Ճարոնական երկու լրտեսներէ  
մահուան այս դեռ չը հրատարա-  
կուած մանրամասնութիւնները մի  
ոռու ժողային սպայից եմ քաղում,  
որ Գարբիւնց է վերադառնում : Այդ  
լրտեսներին ուսուցանող կողակներն  
էին ձերբակալու այն վարչականին,  
երբ սոքա գնում էին Մանչուրիոյ  
երկաթուղային գծի վերայ մի կա-  
մուրջ օդն հանելու :

Իմ խօսակցը, մի շատ երիտա-  
սարդ մարդ, ծանրապէս վիրաւոր-  
ուած էր Պորտ Արթուրի առաջին ու-  
բակոծման միջոցին : Նա թոյլուու-  
թիւն էր ստացել դեռ իտալիա եւ  
այնտեղ վերջացնել իր ապագինումը,  
բայց նախ քան ճամբայ ընկնելը ե-  
կել էր Գարբիւն իր ազգական սպա-  
ների մօտ ինքզինքը խնամելու, և  
ճիշդ այստեղ նա հասել էր այն  
վայրկեանին, երբ երկու ճարոնացի-  
ները գործողութեան միջոցին ձեր-  
բակալուել էին եւ պատժական ատ-  
եանին ներկայացուել :

Իո՞ք ներկայ գտնուեցա՞ք այդ  
երկու ճարոնացիներէ պատժի գոր-  
ծադրութեանը, հարցրի նրան :

—Աւա՛ղ, նրանց մեռնելը ես տես-  
այ, պատասխանեց :

Եւ մինչդեռ զարմանքով նայում  
էի իրեն, շտապեց աւելցնել .

—Մի կարծէք թէ ես միանիխա-  
նական եմ, ընդհակառակը հոգով  
հայրենասէր եմ, որովհետեւ ամենա-  
ջերմ կերպով մաղթում էի, որ պա-  
տերազմի բռնութիւնը ճարոնացի հետ,  
մաղթում էի տեսնել բոլոր ճարոնացի-  
ները շնորհած եւ կարողանալ նրանց  
Թօքթօի մէջ՝ խաղաղութեան պայ-  
մանները թելադրել... բայց, ինչպէս  
իմ բոլոր ընկերները, մեր գինուոր-  
ներէ զնդակներէ տակ այս երկու

ճարոնական պայաներէ մահը տեսնե-  
լով՝ որոնք այնքան քաջութեամբ  
իրենց կեանքը հայրենիքին զոհե-  
ցին, անկարող եղայ ինքզինքս ար-  
գիլել և չը գտնել, թէ այդ պատի-  
ժը անգործ էր :

—Դատաստանին ներկայ գտնուե-  
ցա՞ք :

—Ես տեսայ նրանց ձերբակա-  
լուելը, ներկայ եղայ դատաստանին  
և պատժին... Կը պատմեմ ձեզ այս  
բոլորը իրենց մանրամասնութեամբ...  
Այս սարսափելի տեսարանը ինձ հա-  
լածում է եւ չեմ կարողանում նրան  
մոռանալ...

Եւ կէս ժամուան մէջ, անկեալ  
սպան, ընդհատելով իր այն ժա-  
մանակ, երբ աջ ծնունդը, որ ճարո-  
նական մի ուսուցիչ պայթուցից վի-  
րաւորուել էր եւ որից զեռ ոսկոր-  
ներէ փշրանքները չէին հանուած՝  
սկսում էր սաստիկ ցաւել, ինձ պատ-  
մեց հետեւեալ դէպքերը .

—Կարող եմ ձեզ վերահասցնել, որ  
երբ երկու մեղադրեալները հարցա-  
քննեցան շինական դատաստանակին  
պատերազմական խորհուրդի տեսանի  
էր վերածուել, դատաստաններն ու հա-  
սարակութիւնը, որ բացառապէս  
կազմուած էին սպաներից, չը կարո-  
ղացան բացարձակապէս շարտայայտել  
նրանց՝ իրանց բռնոն հիացումը :

Վերջապէս այս մարդիկը ամենազ  
նիւ զգացումը քննուել էին տողոր-  
ուած, նոքա վճռել էին ինչպէս հայ-  
րենասէրներ ամէն միջոց գործ դնել  
ապահովելու իրենց ազգի յաղթա-  
նակը, և ինչպէս զինուոր, իրենց  
մեծաւորի հրամանով՝ քայքայ էին դէ-  
պի անխուսափելի մահը :

Դատավարական ձեռակառնութիւն-  
ները ամենապարզ կերպով յանցան,  
վիճաբանութիւնները աննշան, որով-  
հետեւ դատարանները մեծահոգու-  
թեամբ, և ո՛չ առանց հայրենասի-  
րական հպարտութեան, իրենց վե-

րայ ծանրացող ոճրի պատասխանատ-  
ւութիւնը չէին թող յայտարարեցին,  
նոքա՛տուին իրենց անուններն ու  
սիրտդոսները առանց որ ձայներն ա-  
մենաշնչին կերպով դողդալային :

—Չօ՞՞՞՞ Ես ի՞նչ կը քուտաւնեմ և  
չորս տարեկան, սպայակոյտի գնդա-  
պետ, և նշգրտի զինուորական բարձ-  
րագոյն պարգից առաջինը սւար-  
տած, սաաց մեղադրեալներից հա-  
սակաւորը՝ մի կարծ եւ գիրուկ, ու-  
ժեղ գլխով մարդ :

—Տէյսօ Եօկիի, երեսուն եւ մէկ  
տարեկան, սպայակոյտի հսկարպետ  
սաաց նրա ընկերը, հասակով աւելի  
բարձր եւ աւելի նուրբ, անկիւնա-  
ւոր դէմքով եւ խիստ թուխ, որը  
մի քիչ արհամարհական նայուածքով  
դիտում էր խորհրդականներին :

—Բուռդիստ, աւելացրեց սա մի  
վայրկեան յետոյ :

—Ինչ որ՞ք, գնդապետ, հարցրեց  
դատարանի նախագարը դուք է՞լ  
էք ձեր մեղադրակցի կրօնից :

—Ո՛չ, պարեն նախագահ, ես քը-  
րիստոնեայ եմ...

Եւ նկատելով այն զարմանքը, որ  
իր յայտարարութիւնը մեզ բողո-  
րիս վերայ գործեց, շտապեց աւել-  
ցնել .  
—Բայց եւ այնպէս ես ճշմարիտ  
ճարոնացի մըն եմ, ճարոնացի ծը-  
նողներից ծնուած... Միայն թէ իմ  
երկոտասարգութեանս Գրիստոսի  
քաղցր խօսքերի գրաւուած՝ դարձայ  
լուտերական :

Ես կողմնապէս անգլիկէն էր  
խօսում, և ոռու-չինական դրա-  
մատան պաշտօնեաներից մի անգլիա-  
հպատակ պարոն էր, որ մեղադրեալ-  
ներէ յայտարարութիւնները թարգ-  
մանում էր դատարանին :

Ես կողմնապէս հարիւրապետը հարցաքն-  
նում էր մի շինական թարգմանի մի  
շոքաւ : Սոքա ցոյց տուին այն պայ-  
թուցիկ նիւթերը, որ իրենց վիրա-  
լից էին գտել, սոքա բնաւ երբէք

չը փորձեցին ձերբակալող կողակե-  
րի յայտարարութիւններէ և ո՛չ մէկ  
կէտը ջրել կամ ստել :

Ի՞րարձանները հարցրեցին սրանց  
զինուորական դատարանի դատար-  
ճիւրը, որ կը պահանջէր մահախեղ  
անել...

Այս երկու մարդկանց դէմքերը դի-  
տում էի եւ չը կարողացայ նկատել  
սարսափ ամենաշնչին նշոյլն սկզբան  
Անդրուէլիօրէն կանգնած էին, և  
նրանց շարժումը միտքը որ եւ է  
նշանով չէր արտայայտուած :

Երկու ճարոնացիների փաստաբանը  
նկատելով որ սոքա իրենց ամբողջ  
յանցանքը խոստովանեցան՝ պահան-  
ջեց որ մահուան պատիժը փոխարի-  
նուի տաժանակիր աշխատանքով :  
Փաստաբանի վերմ պաշտպանողական  
ճառը ոչ մի ազդեցութիւն չը գործեց  
մահապարտ սպաների ցուրտ անդր-  
ւելութեան վրայ, և ոչ մի խօսք  
չարտասանեցին :

Որովհետեւ օրէնքը ընդունում էր  
պատժի մեղմութիւն, բոլորս միասին  
սպասում էինք որ մահուան վճիռը  
փոխուի :

խորհրդակցութիւնը կէս ժամ տե-  
ւեց, և դատարանը դատապարտեց  
երկու սպաներին ծայրագոյն պատժին՝  
կախաղանի : Գնդապետ Եօկիի և  
հարիւրապետ Եօկիի լսեցին մա-  
նուան վճիռը այնպիսի անտարբերու-  
թեամբ, որ կարծես թէ ուրիշ անձնե-  
րի համար լինէր : Հաւանական է որ  
եթէ պատիժը աւելի թեթեւ լինէր,  
նոքա իրենց զարմանքը պիտի ալ-  
տայայտէին :

Պատիժը պէտք է գործադրուէր  
յաջորդ օրը, առաւօտեան կանուխ  
հետաքննում էին միայն կոյրօպակիւնի  
սպասարին, որ հաստատէր : Հեռա-  
գիրը չուտով եկաւ սպարապետ վա-  
ւերացնում էր դատապարտութիւնը,  
բայց ճարոնացի պայաներին խնայելով  
կախաղանի անարգ մահը պատուելով  
նրանց և համաձայնելով, որ քաջե-

դասնում է Մուրատի մտերիմ ընկերը և այլ բազուկը:

93 թվականի վերջերին, Դժոխքի նամակները Մուրատի նամակների հետ միասին երեւում են թէ Հնչակում և թէ Գրոշակում որովհետեւ Մուրատ, Դաշնակցութեան Ջրաբերթի կոմիտէի հետ համաձայնվում է և Գրոշակի սեպտեմբերի նամակների պատճենները, եթէ Ջրաբերթի կոմիտէն իրեն ոգնէ:

Սա մի գեղեցիկ փաստ է ապացուցանող, որ Մուրատի և Դժոխքի նրկարգիրները մնորոշ մասը կազմում էր այն, որ նրանք, թէեւ Հընչակները, ընդհանուր գործի օգտի համար, պատրաստ էին հրաժարվել կուսակցական նեղ հաշիւներից: Սա իսկ Հնչակի այն ժամանակվայ կեդրոնը այլ կերպ էր մտածում: Նա պահանջում էր որ Հնչակեան գործիչները ոչ մի յարաբերութիւն չունենան Դաշնակցութեան օրգանի հետ, իսկ Դաշնակցականներին օգտվեն որչափ կուզեն:

Ահա այս պատճառով, երբ Դժոխք և Մուրատ, իրենց խոստման համաձայն սկսեցին նամակներ գրել և Գրոշակին, մի գեղեցիկ օր, երբ Մուրատը արգէն ձերբակալված էր, Հնչակեան կեդրոնը Հնչակի միջոցով Հրատարակեց որ Դաշնակցութիւնը Մուրատի նամակները գողանալով իր օրգանի մէջ է ապագրել: Հրայր-Դժոխքը զգուշացրեց այդ գրաբարութիւնից, իսկոյն մի նամակ է ուղղում

Հնչակի խմբագրութեան այդ գրաբարութիւնը հերքելու նպատակով և պատճենը ուղարկում Գրոշակին Հընչակի բացի այդ հերքումը չը հրատարակելուց, նաև յարձակվում է իր կարեւոր գործիչի վրա, որը յանդգնութիւնն էր ունեցել յեղափոխական թերթի մէջ հրատարակված մի սուտ տեղեկութիւնը ճշտելու:

Հնչակեան կեդրոնի պոստամատու թիւնը, ժողովրդին բարորդին զենք չը մատակարարելը և տարբեր կուսակցութիւնները ստեղծելու գրաբարութիւններով վարկաբեկելու ճիգերը մեծ ազդեցութիւն են գործում Դժոխքի վրա. և երբ նա բողոքովին համոզվում է թէ Դաշնակցութիւնից գոնէ համեստ չափով զենք և փամփուշտ կարող է ստանալ իր սիրած ժողովրդի պաշտպանութեան համար, առանց վարանելու աւելի սերտ կապերով է կապվում Հայ Յեղ. Դաշնակցութեան հետ: Ու այնուհետեւ նա Դաշնակցական եղաւ և իբրև Դաշնակցութեան պատասխանատու մարմնի անդամ իր վերջին շունչը փչեց իր սիրած ժողովրդին պաշտպանելով:

Ինչպէս վերը շեշտեցինք, Դժոխք-Հրայրի գլխաւոր նպատակն էր ժողովրդին օգտակար հանդիսանալ, և այդ գաղափարը նրանում այնքան սուտուհի էր, որ եթէ Դաշնակցութիւնն էլ նրան որոշ չափով բաւարարութիւն չը տար, նա Դաշնակցու-

թիւնից էլ կը հրաժարվէր և ճար կը փնտէր անմիջականապէս ժողովրդին օգտակար հանդիսանալու:

Դժոխք-Հրայրի 13 տարեան յեղափոխական կեանքը, որը շարունակ անցել է բանտարկութիւնների, ընդհանուր մեղքների փախուստների բանտերից, մէջ շատ բեղմնաւոր է ու ինքնապահական անցքերով, օրոնց նկարագրութիւնը մի լաւ յեղափոխական դասագիրք կարող է կազմել մեր յեղափոխական նոր սերունդի համար:

Մեր ձեռքում այժմ պակասում են մանրամասնութիւնները այդ եզակի կեանքի և մենք ուզեցինք միայն համաստ կերպով հայ ընթերցողին ծանօթացնել Հրայր-Դժոխքի հետ, որը իր երկաթէ կամքով, ժողովրդական պրօբազանդիստի ու կազմակերպչի ընդունակութիւններով, դրանց հետ միասրած և եզակի քաջութիւնը, աւերակալայելի ժողովրդականութիւն ունէր ճարտի և Սասնոյ մէջ, ու ոչ մէկը կարող էր նրա հետ մրցել այդ կէտերում:

Հրայր-Դժոխքը տանջվող ժողովրդից ցաւերով, նրա հետ պարող, ցաւերին զարման փնտող գործիչն էր, ու ժողովրդի մէջ, հեռը ապրեց, համոզեց նրան որ ցաւերի միակ դարմանը՝ դիմադրութիւնն էր և ինքնապաշտպանութիւնն էր. ու զենքը ձեռին ինքնապաշտպանութեան զինուորի գերազանց օրինակը հանդիսացաւ Սասնոյ հպարտ լինների կուրծքի վրա, կարծես այդ

յեռների ձակասին դարերի ի վեր գրօջոված վէս հպարտութեան, կորովի և կամքի կնիքը աւելի շեշտելու համար:

...  
 Բացատրութիւն Հանգուցեայ Պետրոս Աւրէմեանի աշխատութիւնների հրատարակութեան մասին:

Մենք հանգանակութեան ձևանարկեցինք, նպատակ ունենալով մի գեղեցիկ հրատարակութիւնով պատել թանկագին հետնորսի յիշատակը: Այդ հանգանակութեան գումարը 800 լէվի էլ չը հասաւ:

Բուլղարիայում անկարելի լինելով մեր և հանգանակութեան մասնակցողների փափագած չքեղ հրատարակութիւնը ունենալ, մենք նախապէս գիշերքի մեծութիւնը ստիկ, որ տեղից մեր ժողովրդացանք — ժամանակ չունենալու պատճառաբանութեամբ, վերջը դիմեցինք Վիեննա, աթուղից էլ նուազագոյն հաշիւ ներկայացրին մօտ 1500 ոսկի ֆրանք:

Ուրեմն տրամագրելի գումարով անկարելի էր գործի սկսել:

րի մահով մեռնին հրամայում էր հրացանի բռնել:

Ներկայ էի, երբ հրամանատարը ձերբակալուածներին կորդաց կուրօպատկիներ հրամանը:

— Եստ լաւ, պատասխանեց գընդապետ Եօկական, պատրաստ եմ:

Հաջիտակեալը ոչինչ չասաց, նրա հայեացքը աւելի ու աւելի արհամարհան արտայայտում էր իր անտարբերութիւնը պատժի տեսակի նկատմամբ, որ արտօնուում էր:

Գնդապետ Եօկական թողուում էր ինչպէս իր ընտանիքին գրելու, յետոյ համբուրեց հարիւրապետին:

— Գնդապետ, ես ձեզանից աւելի հանդիս եմ մեռնում, ասաց սա:

— Ինչո՞ւ համար որ:

— Ես կատարեցի իմ պարտականուութիւնը հայրենիքի եւ աստուածութեան նկատմամբ... իսկ դուք միայն հայրենիքի...  
 — Ի՞նչ էք ուզում առել, հարիւրապետ:  
 — Ես չատ խորհեցայ, գնդապետ: Դեր ինձ քրիստոնէութեան վրայ ասանների մասին... դուք նրան շատ անհարգանքով տեսիլ էք տալիս... լաւ, բայց ես կարծում եմ, որ դուք հաշտ չէ՞ք քրիստոսի հետ... իսկ ես ինձ յանդիմանելու որ ես է առիթ չունիմ:  
 — Թերեւս դուք իրաւունք ունիք, հարիւրապետ... իսկ ես մի շնորհք եմ խնդրելու ձեզանից... թողաւ թիւն տուէք ինձ կատարելու քրիստոնէական մի ճշմարիտ գործ, որ երբ եւ ինչ ցանկացէք կեանքիս ընթացքում գործարկելու առիթն եմ ունենում... դուք գիտէք, թէ ինձ մօտ կայ բաւական քանակութեամբ չի՞նական դրամատան թղտաղարմներ... ոուսական հազար քուբուր չափ ունիմ... լաւ, ցանկանում եմ անձա՛ր այս փողը հրամանատարին յանձնել, որպէս զի նա ուսական կարծիք-Պաշխան

տայ, մեր թշնամիների աղքատ վիրաորեալների համար... համաձայն էք այս կտակին...  
 Եօկակին մտածեց մի վայրկեան:  
 — Ես միշտ խոր յարգանք եմ տածել զէպի մեզ, իմ գնդապետ, և եթէ սա ձեզ հաճոյք է պատճառում, համաձայն եմ, որ այս փողը մեր թշնամուն սաք:  
 Երբ հրամանատարն եկաւ բանտարկեալներին առնելու, գնդապետ Եօկական յանձնեց մի կոյտ ճերմակ թղտաղարմներ կարմիր նշաններով և ասաց նրան:  
 — Այստեղ մօտ հազար բուրի կայ խնդրում ենք ձեզ սա տալ ոուսական կարմիր-Պաշխան:  
 — Բայց աւելի լաւ չէ՞, որ այս գրամը ձեր ընտանիքներին ուղարկեմ...  
 — Օ՛, ո՛չ, ո՛չ աղաղակեցին միասին երկու զատապարտեալները, — Միկատուն չի մոռնայ մեր կանանց ու երախաներին...  
 — Մի՛ մերժէք մեզ այս գոհացումը, ասաց Եօկական, բաժանեցէք այս փողը ոուս վիրաւորներին...  
 Հրամանատարը սպաների առաջ պնդում էր ուղարկել ձարոնիա, ինչ որ զատապարտեալներին էր պատկանում:  
 Եօկակին մի վայրկեան վարանած երեւեցաւ. նա նայում էր իր թշուառութեան ընկերոջ, որը կրկնում էր իր ցանկութիւնը տալու այս վարձատրութիւնը իր այս երկրի վերայ գործած մեղքերի փոխարէն, և հարիւրապետը կախեց զլուխը և լսին համաձայնում էր իր զինակից կարծիքաւորին:  
 Հրամանատարը ընդունեց և հարցրեց երկու ճարտեղներին թէ՛ արդեօք կարող է ինքը մի բանով օգտակար լինել նրանց:  
 — Եստ կուզէի մի բանիք ընդունիլ, եթէ միայն կարելի է, ասաց Բուլղարիացի, որից յետոյ ձեր սրա-

մադրութեան տակ կը լինենք:  
 Քարբիւնում բաղնիքը մի անձանօթ շտայութիւն լինելով հրամանատարը բերի սուեց տաշտերով ջուր և հրամայեց պահպան զինուորներին երեսները դարձնել, որպէս զի թշուառները, առանց ճնշուելու, իրենց օրինական ձէլը կատարեն:  
 Լուսցարանի պակասութիւնը աւելի զգալի եղաւ Բուլղարիային, քան թէ քրիստոնէայ գնդապետին, որ ցանկանում էր քահանային աեսնել նախ քան պատժի վայրը երթալը: Եւ որովհետեւ լուսեղանի պատտոր չը կար, նրա մօտ ուղարկեցին գունդի ոուս քահանան, Գնդապետը խնդրեց քահանային, որ կրկին կարգայ լեռան քարոզը: Քահանան կարողաց նրան սլափոններէն և Եօկական հետեւում էր նորան իր ճարտեղներէն աւտարանով, որ մօտն էր միացել, Երբ նա հասաւ հատուածին, ուր ասում է՝  
 — Գ... Որովհետեւ եթէ դուք ձեզ սիրողներին սիրէք, ինչ վարձք կունենաք... եւ եթէ դուք ձեր կողմը դնէք միայն էք ընդունում, ինչ տարօրինակ մի բան կ'անէք... նա փակեց դիւրը, ձեռքերը միացրեց և աչքերը մի րոպէ ծածկեց մինչդեռ շրթները միմիջում էին:  
 — Եօկակի, ասաց նա, դուք իրաւունք ունիք, դուք մեռնում էք քաւելի խաղաղ հողով, քան թէ ես, որ թողնեմ երբէք այսքան կենդանի չըզգացի, թէ որքան հեռու է կեանքս Յիսուսի խօսքերից, Պատժի վայրը ասանորդող կառքը սպասում էր արդէն նրան:  
 Դուրսը ամբողջ վիտում էր, վերջին մեծ զէպերի լլվիրը մարտիւր, ամեն տեղ ունը. անգործ խանութպաններ, բարոտանդ իրենք՝ Ծայրագոյն Արեւելք եկած բացառիկ և անսպասելի շահերից օգտուողներ: Ծառանկան երկու սպանները հասան պատժի վայր՝ անդդուելի ինչպէս միշտ:

Բայց եւ այնպէս կարելի էր տեսնել, որ գնդապետը տխուր մտածումների մէջ էր... երկուսն էլ վառեցին իրենց զլանիկները և խնդրեցին փայտերին չը կապուել: Հրամանատարը գրպանից երկու թաղիւնակ հանց և երկուցուց ճարտեղներին: Գնդապետը ինքը կապուեց թիւր աչքերը: Եօկակին մերժեց կապուել թիւր և սրաց, որ ինքն ուզում է տեսնել թէ ինչպէս են նշան առնում:  
 Տասերկու զինուորներ շարուեցան գնդապետի դիմաց՝ և ուրիշ տասերկուս էլ հարիւրապետի:  
 — Եթէ խղճում էք այս թշուառներին, ասաց հրամանատարը հրացանաձիգ զինուորներին, ուղիղ արտերին նշան առէք... մահը վայրկեան կան է լինում:  
 Գնդակները սուրացին...  
 Եօկական ընկաւ ձախ, Եօկակին, առանց կոպերը թարթելու, ընկաւ երեսին:  
 Երկուքն էլ շանթահարուել էին. մեր բարի զինուորները գութ ունէին: Սուսկիցս կնքեց իր վերջին խօսքերը ցաւի ճիշով: Ակամայ իր վիրաւոր ծունկն էր չգնել:  
 — Անպիտան ճարտեղները! աղաղակեց նա, ինչպէս սրունքիս գործը կարգադրեցին... բայց ի՞նչ փոյթ, սա ինձ չի արգիլում ցաւելու Եօկակի և Եօկակի մահը:  
 Տեսնելով իր թշնամի երկու լըր տեսների մահով խորապէս յուզուած այս ճարտեղան գնդակների զոհին, թշուած եմ ոուս նկարիչ վերջապէս խօսքերը, որ ասում էր, թէ կրկու պատերազմիկների քաջութիւնը ամենայնուրեք արգելք է պատերազմի, վերջապէս, ինչպէս իրար սպանելը, երբ իրար համակրում են:  
 Դ. Գրամիսին  
 (Փրքի թան, 21 Յունիս)

Բոլորովին հակառակ լինելով մի պարզ հրատարակութիւն լոյս ընծայելու, մենք յարմար ժամանակի ենք սպասում գումարը գոնէ մինչեւ 1200 ի հասցնել:

Եթէ հանգանակութեան մասնակցողները մէջ անհամբեր կամ միջ հետ չը համաձայնողներ կան, կարող են իսկոյն իրենց զրկած դրամը ետ պահանջել, թէկուզ ընդորդ:

ՎԱՐՊՕ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պոլսէն Վիեննա կը հեռագրեն թէ պետութիւնները Խորթիայէ պահանջներ են օտար սպաներու թիւը աւելցնել Մակեդոնիոյ մէջ:

— Բիթօլիոյ սպաները երկար ժամանակ ոռոճիկ շտապաւոր պատճառով կը շրջապատեն հեռագրատունը և երեք օր շարունակ ոչ ոքի չեն թողուր որ ներս մտնան, իսկ ներսը գտնուող հեռագրական պաշտօնեաներուն կը ստիպեն ամեն մէկ պայտի կողմէն Սուլթանին հեռագրել որ վեց ամիսէ ի վեր անօթի են և իրենց ոռոճիկները կուզեն: Հեռագրիւնները շատ սպառնական եղած են. այդ կացութիւնը յունիս 1էն մինչեւ չորսը շարունակուած է, մինչեւ Պոլսէն ըմբոստացած սպաներուն տեղեկութիւն եկած է սպորի և մայիս ամսուան ոռոճիկները մէկ անգամէն պիտի վճարուին: Բայց սպաները չեն հաւատար խոստումներուն և հեռագրատունը ազատ չեն ձգիր, մինչեւ որ ըստանան ամիսու կէսուան ոռոճիկներն, և վճարողական խոստում, որ յունիս 7ին ալ մնացածը կստանան:

Չինուորներն ալ զրգռուելով սպաներու յաջողութենէն և անոնցմէ աւելի տանջուած ըլլալով, խմբերով կը ներկայանան երրորդ զօրաբանակի հրամանատար նազիֆփաշային և կսպառնան որ զօրանցներէն կը հեռանան ու իրենց գործերուն կը նային եթէ ոռոճիկները չը տրուին: Փաշան կը խնդրէ տասն օր սպասել. զինուորները կը համաձայնին և կը վերադառնան իրենց սեղը:

ՌՈՒՍԻԱ

«Նովոէ Վրէմիա» թերթը Հէլսինկիֆօրսէն կիմանայ թէ հռչակաւոր վերաբուժներ՝ Կօնդօրֆ և կրաքին մերժած են Բօրրիկովի վէրք գործողութեան ենթարկելու այնպէս որ հիւանդանոցին բժիշկը միայնակ ըրեր է, ասոր համար անյաջող հետեւանք ունեցեր է:

— Կը կարծուի որ Բօրրիկովին սպանութիւնը դաւադրութեան հետեւանք է: Հէլսինկիֆօրսի մէջ

ձերբակալուած են քանի մը հոգի, որոնք իբր թէ գիտցեր են ճամբանի գիտաւորութիւնը:

ԱՆԳՆԻԱ

Փլորաէն «Ռայմզ»-ի կը հազորդեն որ ամերիկեան նաւը ծովին մէջ գտեր է մետաղեայ սիլինտը որուն վրա գրուած են քանի մը խոսքեր. կը կարծուի թէ այդ սիլինտըը նետուած է կորսուած օդագնաց Անդրէի կողմէն:

ՌՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ

Պ Ա Տ Ե Ր Ա Չ Մ

Յունիս 14ին յորթիթի Բարիզիէն թերթը Բեթերիպուրկէն կիմանայ թէ հոն կը հաստատուի Բօրթ-Արթուրի մօտ եղած ճակատամարտի լուրը: Բերնսվէթ զրահաւորը ընկղմեր է, իսկ Սեւասթաբօլ և Գիանա զրահաւորները ծանրապէս ֆիստուեր են: Վերջին երկուսի վերանորոգումը այլեւս անկարելի է: Ժէնէրալ Եթօսէլ հրամայած է այդ զրահաւորներուն թնդանօթները վերցնել Բօրթ-Արթուրին ամրութիւնները զինելու անուցամով: Իսկ ուրիշ ֆիստուած նաւերու թնդանօթներով Եթօսէլ ամբարցուցած է երեք նոր կէտեր, Ոսկէ լեռան քովերը:

Ընդհանուր կարծիքը այն է որ Եթօսէլ այլեւս Բօրթ-Արթուրի նաւաբաժնին թող չը պիտի տայ որ դուրս ելլալու նոր փորձերը նեն, այլ ամբողջովին զայն զինակապ պիտի ընէ անոնց թընդանօթներովը ամրութիւնները ամբարցնելու համար, իսկ նաւերն ալ պիտի սյրէ:

— Բարիզի «Ռուրնալ» թերթը Բեթերիպուրկէն կիմանայ թէ Վլատիվասթօքին հրամանատարը հրամայած է որ կիները և մանուկները հեռանան քաղաքէն, որովհետեւ ճարտարներու յարձակումը անխուսափելի կը համարուի:

— Նոյն թերթը կը հազորդէ թէ Սարը պատերազմի դաշտէն եկած վերջին լուրերու հետեւանք Մանչուրիա պիտի մեկնի:

— Պերլինի «Լոկալ Կնզէիգէր» թերթը Թօքիօն կիմանայ թէ ընկղմուած զրահակիր «Պերէս» վէթիւնին վրայ 700 հարիւր հոգի կան եղեր, որոնցմէ 100ը հազիւ ապտեր է: Ռուսներին կորուստը այդ ծովային ճակատամարտի մէջ 1000 հոգիէն կանցնի:

— Յունիս 11ին Լօնտօնէն կը հեռագրեն հետեւեալը:

Պատերազմի դաշտէն իրար հակասող լուրեր կը հասնին, որոնց ճշմարտութիւնը հաստատելը դժուար է: «Տէլ Եթլը» Չիֆուէն կիմանայ թէ Բօրթ Ար

թուրին կացութիւնը յուսահատական է: Քաղաքին շին բնակչութիւնը բացարձակապէս անթութեանէ կը մեռնի, ուսանողը կը կերակրուին միայն եգիպտացորենի ալիւրով և քաղաքային քաղաքէն փախած եւրոպացիները կը հազորդեն որ Բօրթ արթուրի մօտակայ անկումը անխուսափելի է, հակառակ ուսանորթին լաւատես վստահացումներուն:

Նոյնպէս ճիշտ չէ թէ շինական նաւակները կը յաջողին Թօգօի կազմած շղթային անցիլ և պաշարուածներուն ուտեստ հասցնել:

Պաշարումը այնքան զօրաւոր ու ամուր է որ ասու թօքիլանաւերը, որոնք երբեմն նաւահանգստէն դուրս կելլան, իսկոյն կը պատրաստուին ներս քաշուիլ, ճարտական նաւատորմի վրէժնալի կան: Երեւան ելլելուն պատճառովը:

— Հոռմի թերթը կը հազորդեն թէ Օքու և Նօսպու գօրավարներուն յառաջապահ զօրքերը արդէն իրարու միացեր են և հող կը պատրաստեն լուրջ ճակատամարտի մը համար:

Այդ նպատակին հասնելու համար ճարտարները պարտաւորուած են շատ մը ընդհարումներ ունենալ ուսանորթին հետ: Վերջիններուն ճիգերն արգելք հանգիստնալ ճարտական երկրորդ և երրորդ զօրաբանակներու միացման՝ բոլորովին անյաջող անցած են:

— Ռուսները ստիպուեր են նահանջել Կայպիկի և Խայքէնկի մէջ գտնուած գիծով մը, ուր զլիւստը հրամանատար Բուրբաթօքին իր զօրքերուն զխաւոր ուժերով շատ ամբարցած դիրքեր բռնած է:

Ճարտարները կաշխատին Ռուսներէն երկու անգամ սեւիլ թնդանօթներ հանել պատերազմի դաշտը: Սինոք կարելի է որ յարձակողական դիրք բռնեն մարտչալ Օծամարին կուռի գաշտը հասնելուն պէս:

— Յունիս 14ին Բեթերիպուրկէն Պերլին կը հեռագրեն թէ պատերազմէն վերադարձած վրաւոր սպաները կը պատմեն թէ Սիբերիա երկաթուղիներով շատ լաւ կերպով կը տարուին զինուորները: Ամեն օր 8-10 թրէն կը շրջին: Պայքարեան լծին նաւերը օրը 4 հազար մարդ կրնան տեղափոխել: Ժէնէրալ Բուրբաթօքին հեռագրիւններով կը գանգատի ըսպաններէն, որոնք գոհացուցիչ եռանդով և հմտութեամբ չեն ըներ իրենց կարգադրութիւնները: Կը գանգատի նաեւ ձիերէն, որոնք յիշ են և պատերազմի համար անպատրաստ: Համեմատելով Ռուսիոյ ձիերը ճարտարներուն Աւստրիոյ մէջ գնածներուն հետ,

վերջիններս կողակներու ձիերէն աւելի ճարպիկ կը գտնայ:

— Բեթերիպուրկի ֆրանսական զեւսպանը մայր կայսրուհուն ի նպաստ կարմիր Խաչի 100 հազար ֆրանք յանձներ է, զոր նուիրեր են Բարիզի մէջ վերջերս կնքուած փոխառութեան մասնակցող գումարաւորները:

— Բեթերիպուրկէն կը հազորդեն Եւրոպական թերթերուն որ ճարտարները իրենց զօրքերուն շարքերը կը զօրեղացնեն Բօրթական զինուորներով, իսկ վերջերս մինչեւ անգամ խուսափուած զորոնց լաւ վարձատրութիւն ուտան:

— Ռուսական զօրքերու համար Օտէսայէն կանոնադրապէս ալ լիւրի պաշար կը զրկուի:

— Լօնտօնի «Տէլ Եթլ» թերթը Սէուլէն կիմանայ թէ հոն կասկածելի հիւանդութեան քանի մը դէպքեր պատահած են, կը կարծուի որ քօլէրա է:

— Ռուս մէնէրալ Դամիանէնկով, որ անգամ է զինուորական Բարսիտրհրդին կարծիք կը յայտնէ որ ճարտարները չը պիտի կրնան Բօրթ Արթուրը գրաւել, իսկ եթէ գրաւեն ալ, այդ ազգեցու թիւը չը պիտի ունենայ պատերազմի ընթացքին վրայ, «Սեյր յաղթանակը ապահովուած է, կը սէ մէնէրալը: Ռուսիան չի կրնար յաղթուիլ, ճարտարները չը պիտի կարենան Ռուսիոյ պատմական նպատակներուն որ գելլը հանգիստնալ: Ռուսիան պիտի յառաջ երթայ մինչեւ որ երկրագունտը օր մը բաժնուի Սիբերիայէն և Ռուսիան ստալ, նորոգուած ցեղերուն միջեւ:

Ն՝ ՄՐԱԿԱՏՈՒՓ

Ֆիլիպպէ.— Կ. Պ. Չեր վերջին գրութիւնը ստացուած չէ. ինչպէս կերեւի կորսուած է:

ՅՄՅՏԱՐ ԲՈՒԹԻՒՆ

Ամերիկայեան և Արաբիկիցի պ. պ. Բիւլանդ, Վարդգէս Տիգրան և Միտաք Չայրգեաններու հասցէն ով որ գիտե թող հաճի իմացնել հետեւեալ հասցէին:

Արիկ Չայրգեան  
Ռօմանի Պագով

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Դրօշակին վառայի մէջ բաժանորդ գրուի ուղղութիւնը թող դիմեն Բարկէն-Սիւնի ընթերցարանի վարչութեան:

Վառնա  
Отговорникъ  
Мурадъ-Ераносянъ  
Печатница «Взаимность» Варна